

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ

Հայ հին և միջնադարյան գրականության և
նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

Բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

aelita.dolukhanyan@gmail.com

**ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻՆ ՖՐԱՆՍԻՍԿԻ ԵՎ ՖՐԱՆՍԱԳԻՐ ՕՏԱՐԱԶԳԻ
ՀԱՅԱԳԵՏՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ**

Ամփոփում

Հայ միջնադարյան գրականությունն ուսումնասիրող ֆրանսիացի և ֆրանսագիր օտարագրի հայագետներն անհնար էր, որ հատուկ անդրադարձ չունենային Ներսես Շնորհալու գրական ժառանգությանը: Նախ Շնորհալու համբավը դուրս էր եկել և Կիլիկյան Հայաստանի, և Մեծ Հայքի սահմաններից: Երկրորդ նա նշանավոր աստվածաբան էր, քաղաքական գործիչ, հայ գրականության մեջ մեծ նորություններ բերած մատենագիր: Շնորհալու գրականության որոշ տեսակներ լիովին կապվում են վաղ Վերածննդի մտածողության հետ: Ինչպես XX դարի երկրորդ կեսի նշանավորագույն հայագետ Ֆրեդերիկ Ֆեյդին է գրում 1964-ին Փարիզում լույս տեսած «Սասունցի Դավիթ» վիպերգի համահավաք բնագրի ֆրանսերեն թարգմանության առաջաբանում, Շնորհալին շատ մեծ դեր է կատարել հայ ժողովրդի մեջ քրիստոնեական ոգին ամրապնդելու գործում: Ներսես Շնորհալին ծնված լինելով Ֆրանսուա Ասիզից երեք քառորդ դար առաջ՝ դարձավ առաջնորդիչը այնպիսի բարեշրջման, որի նմանը հայտնի է գաղիականություն անունով: Շնորհալին ջանում էր քրիստոնեությունը մոտեցնել հավատացյալ ժողովրդին: Նրա նորարարության արդյունքը եղավ ժողովրդի լեզվով ստեղծված քնարերգությունը, որը խիստ հասկանալի էր իր ժամանակի լայն զանգվածներին: Ժողովրդական քնարերգությունը համարձակորեն մտավ հայ գրականություն:

Ներսես Շնորհալու ստեղծագործության վրա մեծ ուշադրություն է դարձրել ֆրանսիական հայագիտության հիմնադիր Ա.-Ժ. Մեն-Մարտենը, որն ըստ նրա մեծատաղանդ աշակերտ Մարի Ֆելիսիտե Բրոսսեի, ծրագրել էր թարգմանել Շնորհալու գործերը: Այդ ծրագիրը չի իրականացել Մեն-Մարտենի վաղաժամ մահվան պատճառով:

Շնորհալու «Վիպասանութիւն» պատմական չափածո գործին մանրամասն անդրադարձ ունի Էդուարդ Դյուլորիեն, որը «Հավաքումն խաչակիրների պատմիչների, հայկական վավերագրեր» հսկայածավալ գրքում գետեղել է 1145-ին գրված «Ողբ Եղեսիոյ» երկի ֆրանսերեն թարգմանությունը՝ համապատասխան մեկնություններով ու ծանոթագրություններով:

Բելգիացի ֆրանսագիր հայագետ Ֆելիքս Ներ 1886-ին Լուվենում լույս տեսած «Քրիստոնյա Հայաստանը և նրա գրականությունը» կոթողային աշխատության մեջ առանձին բաժին է հատկացրել Ներսես Շնորհալու ստեղծագործությանը՝ թարգմանելով նաև նրա շարականները: Ֆելիքս Ների գրքում ամբողջական ձևով ներկայացված է Շնորհալու անձը և ստեղծագործությունը, մատնանշված է նրա ստեղծագործության նորարարական բնույթը:

Ֆրանսիացի հայագետները հիացմունքով են խոսել Ներսես Շնորհալու ստեղծագործության մասին՝ շեշտելով վերջինիս ազգային ու համամարդկային ուղղվածությունը:

Բանալի բառեր և արտահայտություններ: Ներսես Շնորհալի, Ա.-Ժ. Սեն-Մարտեն, Ղ.Ալիշան, Էդ.Դյուլորիեն, Վ. Լանգլուա, Ֆ.Ֆելդի, խաչակիրներ, շարական, նորարար, սուրբ:

Ներածություն

Ներսես Շնորհալին XII դարի հայ գրականության այն նշանավոր հոգևոր գործիչն ու գրողն է, որի հռչակը դեռ կենդանության օրոք դուրս էր եկել Կիլիկյան Հայաստանի սահմաններից, հայտնի էր Բյուզանդական կայսրության հոգևոր ներկայացուցիչներին, նաև Հայաստանին հարևան քրիստոնյա երկրներին:

Շնորհալու ստեղծագործության ու գործի նկատմամբ հիացմունքի խոսքեր ֆրանսիացիների կողմից ասվել են դեռևս XVII դարում: Այդ մասին վկայում է Շնորհալու ստեղծագործության առաջին հետազոտողներից Ղևոնդ Ալիշանը: Նա վկայում է, թե XVII դարի կեսերին ֆրանսիացի վարդապետ Վելըֆրուան, սքանչանալով Շնորհալու ստեղծագործությամբ, ասել է. «Բայց կայ տեսակ մը հմտութեան՝ յորում յաջողած չլլայ այս հռչակաւոր Հայրապետս»¹:

Հայ գրականագիտության մեջ թե XIX և թե XX դարերում, նաև մեր օրերում, շատերն են հետազոտել Շնորհալու գրական ու մշակութային ժառանգությունը, և դրանց մասին գրվել են գրքեր ու մեծաքանակ հոդվածներ՝ ամենատարբեր լեզուներով:

¹ Ղ.Ալիշան, Շնորհալի եւ պարագայ իւր, Վենետիկ, 1873, էջ 491:

1977-ին Հայաստանի Գիտությունների ակադեմիայի Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը, Շնորհալու հիշատակի 800-ամյակին նվիրված, հրատարակել է հոդվածների ժողովածու, որը բացվում է ՀՍՍՀ ԳԱ նախագահ, ակադեմիկոս, աշխարհահռչակ աստղագետ Վիկտոր Համբարձումյանի «Հայ մշակույթի անմար աստղը» մեծարժեք հոդվածով²:

Մեթոդաբանությունը

Ներսես Շնորհալու վերաբերյալ ֆրանսերեն լեզվով ստեղծված է հարուստ գրականություն:

Հոդվածում օգտագործված են բացառապես օտարազգի հայագետների այն կարծիքները, որոնք փայլուն տիրապետել են գրաբարին, ծանոթ են հայ միջնադարյան մատենագրությանը, հայ ժողովրդի պատմությանը և այդ համայնապատկերի վրա են գնահատականներ տվել Ներսես Շնորհալի աստվածաբանին, հոգևոր ու քաղաքական գործչին, գրողին, երաժշտին, գրիչին ու մեծ մանկավարժին:

XIX դարի ֆրանսիացի հայագետները Ներսես Շնորհալու մասին

Ֆրանսիական հայագիտությունը գիտականորեն հիմնավորեց Անտուան-Ժան Սեն-Մարտենն իր “Mémoires historique et géographique sur l’Arménie” կոթողային աշխատության երկու հատորներով³: Նրա կենսագիրը՝ ֆրանսիական հայագիտության վաստակաշատ ու նշանավոր դեմքերից մեկը՝ Մարի Ֆելիսիտե Բրոսսեն, իր գրած Սեն-Մարտենի կենսագրության մեջ վկայում է, թե վերջինս ի թիվս հայ միջնադարյան մատենագրության բազում այլ գրվածքների պետք է ֆրանսերեն հրատարակեր Ներսես Կլայեցու (Շնորհալու) գրվածքները⁴:

Ներսես Շնորհալու մասին հանգամանալի գրել է նշանավոր հայագետ Էդուարդ Դյուլորիեն իր «Հավաքումն իսլաղալիքների պատմիչների, հայկական վավերագրեր» հսկայածավալ երկլեզու աշխատության մեջ:

Այս հատորում ի մի են հավաքված այն բոլոր հայ մատենագիրների երկերը, անկախ ժանրից, որոնք խոսել են իսլաղալիքների մասին: Դրանց թվում է նաև Ներսես Շնորհալին «Ողբ Եդեսիոյ» գործով:

² «Ներսես Շնորհալի» (Հոդվածների ժողովածու), Ե., 1977, էջ 6:

³ Sté u A.-J. Saint-Martin, Mémoires historique et géographique sur l’Arménie, t. I, Paris, 1818, t. II, Paris, 1819.

⁴ Ա. Դյուլիսյան, Սեն-Մարտենը ֆրանսիական հայագիտության հիմնադիր, Ե., 2014, էջ 10:

Դյուլորիեն հայ մատենագիրների բնագրերը դնում է էջի վերևում, էջի կեսից ֆրանսերեն թարգմանությունը և ապա տալիս տողատակային ծանոթագրությունները:

Գրքի «Նախաբանն» ընդգրկում է I-XVII էջերը: Նրանում էդուարդ Դյուլորիեն ներկայացնում է, թե այդ գիրքը մեկն է այն երկու հատորներից, որ ֆրանսիական գիտությունների ակադեմիան թույլ է տվել հրատարակելու: Գիրքը պարունակում է հայ պատմիչների թողած տեղեկությունները խաչակրաց արշավանքների վերաբերյալ: Նկատենք, որ պատմիչներ ասելով հայագետը հասկանում է պատմական ստեղծագործություններ, որովհետև այդ հսկա ժողովածուում թե՛ բնագրով և թե՛ թարգմանաբար գետեղված են Ներսես Շնորհալու «Ողբ Եդեսիոյ» պոեմը և Գրիգոր Տղայի «Ողբ վասն առնանն Երուսաղեմին» չափածո պատումը: Ընդհանրապես հայ պատմիչներին Դյուլորիեն ներկայացնում է որպես գրողներ և նրանց երկերը կոչում է գրականություն՝ բնավ չանտեսելով վերջիններիս բացառիկ պատմական արժանիքները:

Իր հետազոտության սկզբում գետեղում է Շնորհալու կենսագրական ակնարկը: Ներսեսը չորրորդն է այդ անունը կրող կաթողիկոսներից: Կոչվել է Կլայեցի՝ Հռոմկլայում ապրելու պատճառով⁵: Եղել է Ապիրատ Պահլավունու չորս որդիներից ամենակրտսերը: Նրա հայրը Խարբերդ նահանգում տերն էր Օովք կոչված ամրոցի: Ներսեսը նշանավոր Գրիգոր Մագիստրոսի ծոռն էր և սերում էր պարսից Արշակունիների Սուրեն Պահլավ ճյուղից: Նա ազգակցական կապ ուներ հայ եկեղեցու հիմնադիր Գրիգոր Լուսավորչի հետ: Նրա եղբայրը Գրիգոր Երրորդ Ամենայն Հայոց կաթողիկոսն էր: Ներսեսը 1136-ին եղել է Երուսաղեմում⁶:

Իր եղբոր պնդմամբ Ներսեսը 1166-ին ընտրվում է Հայոց կաթողիկոս:

Նա դառնում է եռանդուն կաթողիկոս: Նամակագրական կապի մեջ է եղել Բյուզանդիայի Մանվել կայսեր հետ: Կարողացել է դիմադրել Մանվելին՝ հայ եկեղեցին հունականին միացնելու գործում:

Վախճանվել է 1172-ի օգոստոսի 13-ին: Դյուլորիեն ճիշտ չի դրել Ներսեսի մահվան թվականը: Առավել ստույգ աղբյուրները Ներսես Շնորհալու մահվան թվականը համարում են 1173-ը:

Դյուլորիեն տեղեկացնում է, թե Ներսեսը թողել է հարուստ գրական ժառանգություն, և հայերը խոր հարգանքով են վերաբերվել նրա գրական ստեղծագործություններին ու բազմիցս հրատարակել են դրանք: Ներսես

⁵ “Recueil des Historiens de Croisades”, documents Arméniens, t. I, Paris, 1869, p. 223 . Տե՛ս նաև «Ամենայն Հայոց կաթողիկոսներ», Ե., 2001, էջ 132:

⁶ Recueil des Historiens..., p. 223.

Շնորհալու գրական քերթվածների մասին գրել են Սուքիաս Սումալն ու Քերովբե Պատկանյանը⁷:

Դյուլորիեն նշում է, թե «Ողբ Եդեսիոյ» երկը դիմառնություն է, և հեղինակն այն կոչել է բարառնական: Տաղաչափական այն ձևը, որն օգտագործել է բանաստեղծը, փոխառված է արաբականից, որն առկա է նաև 1058-ին վախճանված Գրիգոր Մագիստրոսի մոտ: Երկը գրվել է ութոտնյա չափով. ամեն չորս վանկի միջև եղել է դադար. «divisees en quatre pieds, avec une césure au milieu»⁸:

Եդեսիան եղել է արքեպիսկոպոսական նստավայր և հենց սկզբից էլ բնակեցված է եղել Արևելքի քրիստոնյաներով⁹:

«Ողբ Եդեսիոյ» երկն այնքան սիրված է եղել, որ բազմիցս տպագրվել է՝ 1888-ին Փարիզում, 1810-ին՝ Մադրասում: 226-րդ էջի տողատակում հայագետը դնում է թուրքերի կողմից Եդեսիայի գրավելու ճշգրիտ օրը և թվականը՝ 1144թ., շաբաթ օր, 23 դեկտեմբերի¹⁰:

Դյուլորիեի ծանոթագրություններից պարզորոշ երևում է, թե որքան քաջածանոթ էր հայ ժողովրդի ու հայ եկեղեցու պատմությանը, որքան ճշգրիտ հղումներ ունի հայ մատենագիրների երկերին:

Բերենք մի քանի օրինակներ: Հենվելով Մովսես Խորենացու «Հայոց պատմության» հաղորդած փաստի վրա՝ նշում է Աբգար արքայի հավատն առ Հիսուս¹¹: Ըստ հայկական մի ավանդության՝ Մատթեոսն իր Ավետարանը գրել է եբրայեցերենով՝ Հիսուսի խաչվելուց 7 տարի հետո¹²:

Դյուլորիեն խոստովանում է, թե իր գիրքը գրելիս լայնորեն օգտվել է Սեն-Մարտենի «Mémoire historique et géographique sur l'Arménie» գրքի երկու հատորներից, ինչպես նաև «Fragments d'une histoire des Arsacides» գրքի երկու հատորներից¹³:

Գրքում տրվում են էջմիածին ու Շողակաթ բառերի բացատրությունները: Գրիգոր Լուսավորչին երևում է տեսիլ: Տեսնում է մարդկային կերպարանք՝ ձեռքին բռնած ոսկե մուրճ: Լույսի ճառագայթը մարդու կերպարանքով հայտնվում է Վաղարշապատ քաղաքի կենտրոնում ու մուրճով զարկում է գետնին: Այստեղից էլ Շողակաթ անվանումը¹⁴:

⁷ Նույն տեղում, էջ 224:

⁸ Նույն տեղում:

⁹ Նույն տեղում, էջ 225:

¹⁰ Նույն տեղում, էջ 226:

¹¹ Նույն տեղում, էջ 227:

¹² Նույն տեղում, էջ 231:

¹³ Նույն տեղում, էջ 232:

¹⁴ Նույն տեղում, էջ 233:

Էջմիածին բառը բացատրում է “Mot qui signifie le Fils unique est descendu” («Բառ, որ նշանակում է Միածին Որդին իջավ») ¹⁵: Պատմում է նաև Հռիփսիմեի մասին, որին նվիրված տաղ ունի նաև Ներսես Շնորհալին:

Նա դնում է նաև հին վիպասքի հետևյալ հատվածը, որը նույնպես կապվում է Վաղարշապատ քաղաքի հետ.

Հատուած գնացեալ Վարդգէս մանուկն
Ի Տուհաց գաւառէն, զՔասաղ գետով,
Եկեալ նստեալ զՇրէշ բլրով,
ԶԱրտիմէդ քաղաքաւ, զՔասաղ գետով,
Կռել կոփել զդռունն Երուանդայ արքայի¹⁶:

Նա նաև հայտնում է, թե Տիգրան Մեծը Վարդգեսավանում վերաբնակեցնում է Պաղեստինից բերված հրեաների, որոնք այդ ավանը դարձնում են կարևոր առևտրական կենտրոն:

Եդեսիայի մասին Շնորհալին գրել է Մեծ Հայքում Հայոց պետականությունը վերականգնելու հավատով: Դրա համար էլ Մեծ Հայքի պատմական կարևոր վայրերը, հատկապես Բագրատունիների չքնաղ ու հզոր մայրաքաղաք Անին, հայտնվում են Եդեսիայի կողքին՝ որպես ողբակից: Քանի որ արդեն բազում եվրոպացի ճանապարհորդներ խոր հիացմունքով նկարագրել էին Անիի եզակի ճարտարապետության շքեղությունը, Դյուլորիեն, հենվելով պատմիչ Ստեփանոս Ասողիկի հաղորդած փաստերի վրա, խոսում է Անիի Մայր տաճարի մասին, որի ճարտարապետն էր Տրդատը: Տաճարն ավարտվել է Կատրանիդե թագուհու ջանքերով, որը Գագիկ Առաջինի կինն էր և Սյունյաց Վասակ իշխանի դուստրը¹⁷:

Քանի որ Շնորհալին հայ ժողովրդի հոգում ու սրտում ցանկանում էր վառ պահել Վարդանանց ազգային-ազատագրական պայքարի ոգին, ապա ծանոթագրություններում բացատրվում է, թե ովքեր էին Վարդանանք: Ծանոթագրություններում Դյուլորիեն ներկայացնում է «Ողբ Եդեսիոյ» երկի հայերեն որոշ բառերի բացատրություններ:

Դաղմատացի բառը բացատրում է որպես հոմանիշ Արևմուտքի՝ Հռոմի ու ֆրանկների¹⁸:

Տրվում է նաև *եմիփորոն* բառի բացատրությունը: Դա արևելյան քրիստոնյաների հոգևոր զգեստի վրա հագցված նկարեն կտորե

¹⁵ Նույն տեղում:

¹⁶ Նույն տեղում, էջ 235:

¹⁷ Նույն տեղում, էջ 237:

¹⁸ Նույն տեղում, էջ 237:

զարդարանք է խաչի ձևով, որն ունենում են եպիսկոպոսները՝ հագած ուսերի և կրծքի վրա¹⁹:

Եմիփորոնի նկարագիրը տվել է նաև Վիկտոր Լանգլուան “Voyage à Sis” աշխատության մեջ: Եմիփորոնը մետաքսից է, ասեղնագործված Հիսուս Քրիստոսի և բազմաթիվ սրբերի պատկերներով²⁰:

Դյուլորիեն ներկայացնում է նաև *մամուլ* բառի բացատրությունը: Նրա կարծիքով *մամուլ* արաբերեն բառ է, նշանակում է՝ գիտնական, ուսուցիչ²¹:

Իսկ առաջնորդք չարեաց նոցին,

Որոց մամուլս անուանեին...²²

Ստ.Մալխասյանցի բառարանում կա հետևյալ հետաքրքիր բացատրությունը. «Մամուլ, սխալ գործածություն՝ փոխանակ Մալումի»²³:

«Մալում (արաբերեն - ուսուցիչ), մահմեդական կրոնի կարդացող, ուսուցիչ, իմամ»²⁴:

Ֆելիքս Ներ Ներսես Շնորհալու թարգմանիչ և մեկնաբան

Ֆելիքս Նևի բոլոր աշխատությունները գրված են ֆրանսերենով: Նա XIX դարի նշանավոր հայագետներից է՝ անկողմնակալ ու հայամետ:

Նրա աշխատությունները ճանաչված էին Եվրոպայում և Ռուսաստանում: 1886-ին Ներ Լուվենում հրատարակում է “L’Arménie chrétienne et sa littérature” արժեքավոր հետազոտությունը, որն այսօր էլ իր դրույթներով ելակետային է: Քանի որ աշխատությունը կոչվում է «Քրիստոնյա Հայաստանն ու նրա գրականությունը», ապա դրանում տեղ են գտել միջնադարի պաշտոնական գրականությունը ներկայացնող հեղինակները, որոնք ստեղծագործել են տարբեր ժանրերով:

Ներսես Շնորհալին ուսումնասիրության մեջ ներկայացված է բազմաբանակ էջերով ու նրա տարբեր գործերից կատարված թարգմանություններով:

Գրքի VII հատվածը նվիրված է Վարդան Մամիկոնյանին ու Ավարայրի հերոսամարտում նահատակված նրա զինակիցներին:

Հայտնի այս շարականին Ներ կցել է պատմական ակնարկ: Քրիստոնեությունը պետական կրոն հռչակելուց հետո հայերը երկար

¹⁹ Նույն տեղում, էջ 262:

²⁰ V.Langlois, Voyage à Sis, capitale de l’Arménie, au moyen age, Paris, 1855, p.34.

²¹ “Recueil des Historiens...”, p. 262.

²² Նույն տեղում, էջ 264:

²³ Ստ.Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հ. III, Ե., 2010, էջ 246:

²⁴ Նույն տեղում, էջ 285:

ժամանակ չվայելեցին անկախության ապահովությունը. 428 թվականին վերացավ հայ Արշակունիների թագավորությունը²⁵: Հայաստանը բաժանվեց երկու հզոր հարևանների՝ Բյուզանդական կայսրության և պարսից Սասանյանների միջև: Բոլոր դեպքերում Հայաստանը դիմադրում էր ապրելու մագդեզական կրոնի օրենքներով պարտադրանքին: Ազգային դիմադրողական պայքարը պատկերել են Ոսկեդարի երկու պատմիչները՝ Եղիշեն ու Ղազար Փարպեցին: Այս երկու պատմիչների մասին առանձին և ծավալուն խոսք կա զրքի հատուկ բաժիններում:

Կրոնափոխության պարսից արքունիքի պահանջին ի պատասխան՝ հայերն ապստամբում են պարսիկների դեմ 451 թվականի հունիսի 2-ին²⁶:

Հայ եկեղեցին սրբացրել է Ավարայրի հայ հերոս նահատակներին: Ներսես Շնորհալիւն էլ այդ նահատակներին նվիրել է երկու շարականներ:

Ըստ Եղիշեի՝ պատմվում է Հազկերտ Երկրորդի դավանափոխության պահանջը ներկայացնող հրովարտակի և Հայաստանում դրա շուրջը կատարվող պատմական իրադարձությունների մասին: Հայերը սպարապետ Վարդան Մամիկոնյանի գլխավորությամբ ճակատամարտի են գնում Ավարայրի դաշտում, որը գտնվում է Արարատ լեռան հարավում: Արտազ գավառում՝ Տղմուտ գետի ափին, տեղի է ունեցել այդ ճակատամարտը: Սպարապետ Վարդան Մամիկոնյանին՝ որպես քաջ զորահրամանատարի, գիտեին և՛ պարսից արքա Հազկերտ Երկրորդը, և՛ Բյուզանդիայի կայսր Թեոդոս Երկրորդը²⁷:

Նևը ներկայացնում է հայերի նահատակների քանակը՝ 287 հերոսներ նախարարներից և մարդիկ հին արքայական ընտանիքից (*“on compta parmi les morts 287 héros d’entre les princes et les gens de l’ancienne maison royale”*) և նրանց հետ 749 զինվորներ, բոլորը միասին՝ 1036 մարդ²⁸:

Նա գրում է նաև հայ հոգևորականների մասին, որոնք Ավարայրի դաշտում գերեվարվեցին: Նրանց թվում էին կաթողիկոս Հովսեփը, եպիսկոպոս Սահակը, Ղևոնդ երեցը և նրանց ընկերակիցները: Նրանք հոգու արիությամբ տարան գերության բոլոր չարչարանքներն ու նահատակվեցին Պարսկաստանի Նյուշապուհ քաղաքում:

²⁵ F.Nève, L’Arménie chrétienne et sa littérature, Louvain, 1886, p. 111.

²⁶ Ակադեմիական պատմագրությունը Ավարայրի ճակատամարտը դնում է 451 թվականի մայիսի 26-ին-Ա.Դ.:

²⁷ F.Nève, L’Arménie chrétienne et sa littérature..., p. 205.

²⁸ Նույն տեղում, էջ 206:

Հայոց եկեղեցին ամեն տարի հուլիսի 31-ին նշում է Ղևոնդյանների տոնը: Նևր նշում է, թե Ավարայրի հերոսամարտը, բացի ազգային-ազատագրական պայքար լինելուց, կոիվ էր նաև հանուն ազգային հավատի:

Վարդանանց շարականը, ըստ Նևի, ներկայացնում է նաև Շնորհալու բառապաշարի հարստությունը: Թարգմանաբար Նևր ներկայացնում է Շնորհալու երկու շարականները, որոնցից առաջինը Վարդանանց նվիրվածն է:

Նևն իր հետազոտության մի առանձին բաժին նվիրում է Շնորհալու ողջ ստեղծագործությանը. «La patriarche Nerses IV, did Schnorhali ou le Gracieux, envisagé comme écrivain» («Կաթողիկոս Ներսես Չորրորդը, կոչված Շնորհալի, դիտարկված որպես գրող») ²⁹:

Հայ եկեղեցին, որն ունի նշանավոր շատ կաթողիկոսներ, XII դարում ունեցավ բարձր չափանիշների մի կաթողիկոս, որը նաև մեծ գրող է: Նա թողել է հիացմունքի արժանի տողեր արձակում և չափածոյում («auteur qui a laissé grand nombre de productions admirees en prose et en vers») ³⁰:

Նևր ներկայացնում է Շնորհալու կենսագրությունը: Խոսում է Գրիգոր Մագիստրոսի մասին, որի ծոռն էր Շնորհալին ու կրթվել էր Մագիստրոսի որդի՝ Գրիգոր Վկայասեր կաթողիկոսի մոտ: Կրթությունը շարունակել էր Կարմիր վանքում, որի դպրոցը գլխավորում էր վանահայր Ստեփանոսը՝ կոչված Գիտնական: Որոշ ժամանակ Ներսեսն իր կաթողիկոս եղբոր՝ Գրիգոր Երրորդի հետ գտնվում էր Եփրատ գետի ափին կառուցված Հռոմկլա ամրոցում:

Ներսեսը շատ սիրված էր իր ժամանակակիցներից՝ իր մեղմ բնավորության, կրթվածության և փայլուն հոետորության պատճառով: Նա օժտված էր բազում ձիրքերով, որի համար էլ կոչվել է Շնորհալի: «Որպես բանաստեղծ Ներսես Շնորհալին բացեց նոր ճանապարհ» («Comme poète, Nersès Schnorhali a ouvert une voie nouvelle») ³¹: Նա հարստացրեց հայ բանաստեղծական խոսքը նոր տաղաչափական հնարքներով: Նրա գործերը շնչում են հոգևորով ու հայրենասիրությամբ:

Շնորհալու արձակ գործերը հայերենով առաջին հերթին լույս են տեսել Կոստանդնուպոլսում, Սանկտ Պետերբուրգում և ավելի ուշ՝ Վենետիկում: Նա գրել է ամենատարբեր ժանրերով՝ կրոնական և շրջաբերական, թղթեր վիճաբանական, ներբողյաններ, շարականներ, աղոթքներ և այլն: Նրա գործերի մեծ մասը թարգմանվել են լատիներեն՝

²⁹ Նույն տեղում, էջ 269:

³⁰ Նույն տեղում:

³¹ Նույն տեղում, էջ 272:

համեմատված Սուրբ Ղազար կղզում պահվող ձեռագրական օրինակների հետ: Այդ թարգմանությունը կատարել է Վենետիկի երեց Հովսեփ Կապելետին: 1836թ. Jean Audall-ը, որը հայ լուսավորչական էր Կալկաթայից, հրատարակել է Ներսես Շնորհալու կենսագրությունը:

Նևը հիացմունքով է խոսում Շնորհալու «Թուղթ ընդհանրականի» մասին: Թուղթը գրվել է, երբ Շնորհալին արդեն 1166-ին դարձել էր կաթողիկոս և իր պատգամներն էր հղում հայ ազգի բոլոր խավերին: Վիլեֆրոյն այդ թուղթը համարում է լի գթասրտությամբ ու հաստատակամությամբ: Նա ներկայացնում է նաև Բյուզանդիայի կայսր Մանվելի հետ Շնորհալու նամակագրությունը, որը նպատակ ուներ մերժել կայսեր երկու եկեղեցիների միաբարական նպատակները:

Նա խոսում է նաև Շնորհալու՝ արևորդիների աղանդին հետևող հայերին ուղղված թղթի մասին:

Նևը գրել է Շնորհալու հռչակավոր «Հաւատով խոստովանիմ...» աղոթքի մասին, որը թարգմանված է քսանչորս լեզուներով՝ հին և նոր, արևելյան ու արևմտյան, նաև հայերենով՝ գրաբար ու աշխարհաբար:

Մեծարժեք են նաև Ներսես Շնորհալու երկու ներբողյանները, որոնք նվիրված են երկնային քահանայապետությանը՝ հատկապես հրեշտակներ Միքայելին ու Գաբրիելին, նաև երկնային բոլոր առաքինիներին, որոնց տոնը հայերը նշում են նոյեմբերի 8-ին³²: Ներսեսը չէր կարող անտեսել Դիոնիսիոս Արեոպագոս «Երկնային քահանայապետությունը», որը VIII դարում հայերեն էր թարգմանել եպիսկոպոս Ստեփանոս Սյունեցին³³:

Գովասանքի է արժանի նաև Շնորհալու մի ճառը՝ նվիրված Սուրբ Խաչին: Դա թեմայի յուրօրինակ ընդլայնում էր, որի վերաբերյալ Դավիթ Անհաղթը ճառ էր արտասանել Աթենքում կամ Կոստանդնուպոլսում³⁴:

Գրիգոր Մագիստրոսը XI դարում հայ տաղաչափության մեջ արդեն նորություններ էր բերել: Ներսեսն առավել զարգացրեց տաղաչափական նորությունները, որոնք սիրելի դարձան հայ բանաստեղծների համար մինչև նոր ժամանակները:

1830-ին Շնորհալու բոլոր չափածո գործերը հրատարակվեցին Վենետիկում՝ ըստ տարբեր ձեռագրերի համեմատական փաստերի:

Առաջիններից մեկը, որը մեկնաբանել է Շնորհալու գործունեությունն ու ստեղծագործությունները, եղել է Կիրակոս Գանձակեցին, որն իր պատմության մեջ հիացմունքով է խոսում նրա մասին:

³² Նույն տեղում, էջ 277:

³³ Նույն տեղում, էջ 278:

³⁴ Նույն տեղում:

Ներ հիշում է Կիրակոս Գանձակեցու այն վկայությունը, թե Ներսեսն իր առավել իմաստությամբ փայլում էր ոչ միայն հայ վարդապետների մեջ, այլև հույների ու ասորիների, և նրա համբավը տարածված էր ողջ քրիստոնեական աշխարհում³⁵:

Հայագետը ներկայացնում է, թե որքան սիրված է եղել Շնորհալու «Յիսուս Որդի» երկը, որն ունեցել է դիդակտիկ-ուսուցողական նշանակություն ու հստակ ներկայացրել է Աստվածաշնչի Հին ու Նոր կտակարանները.³⁶ «Այս միահանգ պոեմը հայերի մոտ մնաց մեծարված և միաժամանակ նրանց կողմից համարվեց որպես զլուխգործոց»³⁷:

Շնորհալու նորարարությունների մեջ նշվում են նաև նրա հրաշալի հանելուկները, որոնց դերը բացատրել է Կիրակոս Գանձակեցին. «Եւ զի յամենայնի հանճարեղ էր Ներսէս, արար և առակս խորհրդաբարս ի գրոց, և հանելուկս, զի փոխանակ առասպելեաց զայն ասասցվեն ի գինարբուս և ի հարսանիս»³⁸:

Հիացմունքով է ներկայացնում հայագետը նաև «Վիպասանութիւն» պատմական պոեմը, որը գրված է Հռոմեոսի հետևությամբ ու գովերգում է Հայկազյան ու Արշակունի թագավորական գերդաստանները:

Մանրամասն անդրադարձ կա «Ողբ Եդեսիոյ» երկին, որում, ըստ հայագետի, ներկայացված է քրիստոնյաների պայքարը մահմեդականների դեմ: Միջագետքի այդ գեղեցիկ քաղաքը պաշարում է Հալեպի թուրք ամիրա Ջանգին ու այն գրավելուց հետո սկսում է ավերը, ավարը, կոտորածը: Նա խոսում է «Ողբ Եդեսիոյ» երկի տարբեր հրատարակությունների մասին: Սա բացառապես հայրենասիրական քերթված է, որը առավել տպավորիչ է դառնում որդեկորույս մոր՝ Եդեսիայի ողբից:

Հայագետը դիտարկում է պոեմի ութ մասերը: Առաջին ողբում կամ երգում Եդեսիան դիմում է Երուսաղեմին, Հռոմին, Կոստանդնուպոլսին, Անտիոքին: Երկրորդում նա դիմում է Մեծ Հայքին: Երրորդում նա հագնում է սգո զգեստները: Չորրորդում ողբում է բարբարոսների կատարածի համար: Հինգերորդում ներկայացնում է թշնամու անգթությունը: Վեցերորդում ներկայացնում է միջնաբերդի անկումն ու զորքի կոտորածը: Յոթերորդում անեծքներ է տեղում հաղթողների վրա: Ութերորդում Եդեսիայի կոտորածից

³⁵ Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, Աշխատասիրությամբ Կ.Ա.Մելիք-Օհանջանյանի, Ե., 1961, էջ 118:

³⁶ F.Nève, L'Arménie chrétienne..., p. 282.

³⁷ Նույն տեղում:

³⁸ Նույն տեղում, էջ 284: Նաև տե՛ս Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, էջ 147:

փրկվածներին հայտարարում է, թե կգան խաչակիրները Ասիա և կհասնեն Խորասան³⁹:

Նա խոսում է նաև պոեմի թողած ազդեցության մասին, որի նմանողությամբ կարելի է պատկերել մեծ ու փոքր իրադարձությունների հիշատակները:

Շնորհալույն շատ բարձր է գնահատել նաև Ֆրեդերիկ Ֆեյդին: 1964 թվականին Ֆեյդիի թարգմանությամբ լույս տեսած «Սասունցի Դավիթ» էպոսի համահավաք բնագրի առաջաբանում վերջինս ներկայացնում է հայ միջնադարյան մատենագրության բարձրարժեքությունը ու նշում, թե հայ գրականության մեծարժեք գործերով հայերը կողք կողքի կանգնեցին հույների, լատինացիների և ասորիների հետ:

Ու երբ քրիստոնյա քաղաքակրթությունը ուշ միջնադարում բարեշրջվեց՝ հաստատելով նոր-լատինական մտքի սկիզբը, հայերը ևս գտնվում էին այդ շարժման մեջ և վերջիններից չէին: Կարելի է ստուգապես ասել, որ Հայոց կաթողիկոս Ներսես Շնորհալին, ծնված Ֆրանսուա Ասիզից (François d'Assise) երեք քառորդ դար առաջ, դարձավ առաջմղիչը այնպիսի բարեշրջման, որի նմանը մեզ հայտնի է գաղիականություն անունով: Նա ջանում էր քրիստոնեությունը մոտեցնել հավատացյալ զանգվածներին և դրա համար իրեն վերապահում էր աստվածաբանական վեճեր վարել ընտրելագույնների հետ՝ ժողովրդի գիտակցության մեջ կրոնի վարդապետությունը քարոզելով ավելի հրապուրիչ ձևերով՝ ներկայացնելով Աստծու անսահման սերը իր արարածների նկատմամբ: Նա դիմում էր ժողովրդին՝ չխորշելով գրել նրանց համար խոսակցական լեզվով: Այդ նորարարության հետևանքը եղավ ժողովրդական լեզվով ստեղծված մի քնարերգություն, որն իր մեջ շրջադարձ ունեցավ դեպի պարսկական զգացական ձևերը՝ իր խորքում միշտ կրելով քրիստոնեական խորհրդապաշտությունը: Լատինացիների ընդդիմություններն Արևելքում և Հայոց պետականության վերացումը Կիլիկիայում, հենց XIV դարից պատճառ դարձան հայ պաշտոնական գրականության անկմանը: Կոստանդնուպոլսի գրավումը թուրքերի կողմից ավարտեց հայերի մեկուսացումն Արևմուտքից:

Եզրակացություն

Միջնադարի հայ գրականությունը հատկապես ֆրանսիացի ու ֆրանսիագիր հայագետների կողմից արժանացել է միջազգային ճանաչման: Ներսես Շնորհալին իր ստեղծագործության մեջ շոշափել է ոչ միայն համահայկական նշանակություն ունեցող խնդիրներ, այլև

³⁹ F.Nève, L'Arménie chrétienne..., p. 285.

համամարդկային: Նրա «Ողբ Եդեսիոյ» ստեղծագործությունը ուշագրավ դրվագ է խաչակիրների հետ կապված Արևելքի քրիստոնյաների հույսերը ներկայացնելու առումով:

Շնորհալի երաժիշտը գրել է այնպիսի շարականներ, որոնք այսօր էլ երգվում են ողջ աշխարհում գոյություն ունեցող բոլոր հայկական եկեղեցիներում:

Ֆրանսիացի հայագետները շեշտում են Շնորհալու նորարարությունը միջնադարի հայ գրականության մի շարք բնագավառներում: Նա Եվրոպական Վերածննդի մեծ և հանճարեղ հեղինակներից առաջ՝ XII դարում, գրեց ժամանակի խոսակցական լեզվով: Ֆրանսիացի հայագետները շեշտում են նրա ստեղծագործության բազմաժանր ու վերժամանակյա լինելը:

Аэли́та До́луханиян

**Нерсес Шнорали в оценке французских и франкоязычных
иностранных арменоведов
Заключение**

Ключевые слова и выражения: Нерсес Шнорали, А.-Ж. Сен-Мартен, Г.Алишан, Эд. Дюлорье, В.Ланглуа, Ф.Фейди, крестоносцы, шаракан, новатор, святой.

Французские и франкоязычные зарубежные учёные, изучающие армянскую средневековую литературу, не могли не обратить особого внимания на литературное наследие Нерсеса Шнорали. Во-первых, слава о Шнорали вышла за пределы как Киликийской Армении, так и Великой Армении. Во-вторых, он был видным богословом, политиком и летописцем, привнесшим великие новшества в армянскую литературу. Определенные виды литературы Шнорали тесно связаны с мышлением раннего Возрождения. Как пишет в предисловии к французскому переводу полного сборника эпоса «Давид Сасунский», изданного в Париже в 1964 году, виднейший арменовед второй половины XX века Фредерик Фейди, Шнорали сыграл очень большую роль в укреплении христианского духа среди армянского народа. Нерсес Шнорали, родившийся за три четверти века до Франсуа Ассизского, стал сторонником реформы, известной как галлицизм.

Шнорали старался приблизить христианство к верующим людям. Результатом его новаторства стала лирика, созданная на языке народа, которая была в высшей степени понятна широким массам его времени. Народная лирика смело вошла в армянскую литературу.

Большое внимание работам Нерсеса Шноралу уделял основоположник французского арменоведения А.-Ж. Сен-Мартен, который, по словам его одаренного ученика Мари Фелисите Броссе, планировал перевести произведения Шнорали. Этот план не осуществился из-за безвременной кончины Сен-Мартена.

Эдуард Дюлорье дал подробную ссылку на исторический стихотворный труд Шнорали «Эпические стихи», включивший французский перевод «Плача Эдесы», написанного в 1145 году, в огромную книгу «Сборник армянских документов историков крестоносцев,» с соответствующими комментариями и аннотациями.

Бельгийский франкоязычный арменовед Феликс Нев в своем монументальном труде «Христианская Армения и ее литература», изданном в Лувене в 1886 году, посвятил отдельный раздел творчеству Нерсеса Шнорали, осуществив также перевод его гимнов. Книга Феликса Неве наиболее полно представляет личность и творчество Шнорали, подчеркивая новаторский характер его творчества.

Французские арменоведы с восхищением отзывались о творчестве Нерсеса Шнорали, подчеркивая его национальную и общечеловеческую направленность.

Aelita Dolukhanyan

Nerses Shnorhali in the evaluation of French and French-speaking foreign armenologists

Conclusion

Key words and expressions: Nerses Shnorhali, A.-J. Saint-Martin, Gh.Alishan, Ed.Dulaurier, V. Langlois, F. Feydit, crusaders, innovator, saint.

French and French-speaking foreign scholars studying Armenian medieval literature could not help but pay special attention to the literary heritage of Nerses Shnorhali. Firstly, the fame of Shnorhali went beyond the borders of both Cilician Armenia and Greater Armenia. Secondly, he was a prominent theologian, politician and chronicler who brought great innovations to Armenian literature. Certain types of Shnorhali's works are closely related to early Renaissance thinking. As writes Frederic Feidy, the most prominent armenologist of the second half of the twentieth century, in the preface to the French translation of the complete collection of the epic *David of Sasun*, published in Paris in 1964, Shnorhali played a very important role in strengthening the Christian spirit among the Armenian people. Nerses Shnorhali, born three quarters of a century before François of Assises, became a proponent of the reform known as Gallicism.

Shnorhali tried to bring Christianity closer to believing people. The result of his innovation was the lyrics, created in the language of the people, which was highly understandable to the broad masses of his time. Folk lyrics boldly entered Armenian literature.

The founder of Armenian studies in France, A.-J. Saint-Martin paid great attention to the works of Nerses Shnorhali. According to his gifted student Marie Félicité Brosset, he planned to translate the works of Schnorhali. This plan did not come to fruition due to the untimely death of Saint-Martin.

Édouard Dulaurier gave a detailed reference to Shnorhali's historical verse work *Epic Verses* which included a French translation of the *Lamentations on Edessa*, written in 1145, in the huge book "*Collection of Armenian Documents of the Historians of the Crusaders*", with appropriate comments and annotations.

The Belgian French-speaking Armenologist Félix Nève, in his monumental work *Christian Armenia and Its Literature*, published in Louvain in 1886, devoted a separate section to the work of Nerses Shnorhali, also translating his hymns. Felix Nève's book most fully presents the personality and work of Shnorhali, emphasizing the innovative nature of his work.

French armenologists spoke with admiration of the work of Nerses Shnorhali, emphasizing both his national and universal orientation.

Օգտագործված գրականություն

ա) Հայերեն

1. **Ալիշան Ղ.**, Շնորհալի եւ պարագայ իւր, Վենետիկ, 1873:
2. **«Ամենայն Հայոց կաթողիկոսներ»**, Երևան, 2001:
3. **Դոլուխանյան Ա.**, Սեն-Մարտենը ֆրանսիական հայագիտության հիմնադիր, Երևան, 2014:
4. **Դոլուխանյան Ա.**, Ֆրեդերիկ Ֆեյդին հայագետ, Երևան, 2008:
5. **Կիրակոս Գանձակեցի**, Պատմություն Հայոց, Աշխատասիրությամբ Կ.Ա.Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961:
6. **Մայիսայանց Ստ.**, Հայերեն բացատրական բառարան, հ.III, Երևան, 2010:
7. **Մովսես Խորենացի**, Պատմութիւն Հայոց, Քննական բնագիրը և ներածությունը Մ.Աբեղյանի և Ս.Հարությունյանի, Նմանահանություն, Երևան, 1991:
8. **«Ներսես Շնորհալի»** (Հոդվածների ժողովածու), Երևան, 1977:
9. **Սրբոյն Ներսեսի Շնորհալոյ** Պատմութիւն վարուց, Վենետիկ, 1854:

բ) Ֆրանսերեն

1. Notice histotique sur M.A.J.Saint-Martin, membre de l'Institut (Académie des inscriptions) chevalier de la legion-d'honneur du Journal Asiatique, Par M. Brosset Jeune, son élève, Paris, 1833.
2. Recueil dos Historiens des Croisades, documents Arméniens, t. I, Paris, 1869.
3. Néve F., L'Arménie chrétienne et sa littérature, Louvain, 1886.
4. Langlois V., Voyage à Sis, capitale de l' Arménie, au moyen age, Paris, 1855.

Խմբագրություն է ուղարկվել 18.08.2023թ.

Հանձնարարվել է գրախոսության 05.09.2023թ.

Հրապարակման է ներկայացվել 29.09.2023թ.